նրա բարձր աստիճանի զգայնութիւնը՝ հայրենական կեանքի տպաւորութիւնները ընդունելու համար։ Նրա բոլոր երկերը այդ կարգի տաղանդի ծընունդ են. երկեր, որոնց վերջինը այսօր «Ցեցեր»-ով հայ հասարակութեան առջև է դնում, իսկ մօտ ապագայում կ'երևայ «Բղդէ»-ն, որով Պռօշեանցի տաղանդի ծաւալը, ըստ մեզ, վերջնականապէս կ'որոշուի։

«Մուրճը» իւր կողմից արել է և անում է, ինչ հարկաւոր է Պռօշեանցի յօբէլեանը գիտակցօրէն կատարելու համար։ Մի կողմից նա տպում է յօբէլեարի «Ցեցերը», մի գործ, որը յատկապէս «Մուրճ»-ի համար է գրուած (և գրուած՝ զարմանալի բան, գրուած, ասում ենք ամիս ու կիսում՝ նոյեմբերի սկզբից մինչ դեկտեմբերի կէսը, անցեալ 1888 թուականի). միւս կողմից՝ «Մուրճը» տուեց Պռօշեանցի վէպերի ընդարձակ քննադատութիւնը այդ վէպերի բովանդակութեամբ միասին։ «Մուրճը» գրանով կամեցաւ ծանօթացնել հայ հասարակութեան այն մարդու հետ, որին արժանաւոր կերպով տօնելու համար՝ իւր ձայնը միացնում է ընդհանուրի ձայնի հետ։ Պռօշեանցին բոլորովին արժանի գտնելով այդ մեծ պատիւն, ցանկանում ենք որ մեր բաժանորդները և ալ ընթերցողները միշտ առաջինը լինին ընդհանուր հրաւէրքին արձագանք տուողը։ Յօբէլեանը կատարուելու է դալ ապրիլ ամսին և այդ օրը թող զգացվի ամենուրեք, որպէս հայկական գրական մեծ տօն։

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻՆ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ.

Մեծ. խմբագիր.

Մօտ օրերս ստանալով մի ժրաջան և հայ գրականութեամբ գլխեր ու ցերեկ պարապող բարեկամիցս հետևեալ նամակը, բառ առ բառ արտագրած գրութեան էական կէտերը՝ ուղարկում եմ Ձեզ, խնդրելով տեղ տալ Ձեր նորաբողբոջ ամսաթերթի մէջ։ [1])

...«Գիտես, Պերճ, որ Ներսիսեան դպրոցը որքան էլ մեզ դառնացնում է, այնուամենայնիւ մեր լեզուն չի պատռում ասելու. «և եղիցի տուն քո քեզ աւերակ»։ Մենք նրան պարտական ենք մեր զգացմունքներից, մեր ձգտումներից ամենալաւը. այդ անուան հետ կապուած են մեր դեղաձիծաղ փչողութիւնները, ցնորքները, յուսերը. նրան ենք պարտական, որ սովորել ենք արհամարհել նիւթականը, կամ չը մոռանալ, որ միմիայն

---

[1]) Թէպէտ բարեկամս իրաւունք չի տուել ինձ հրատարակելու իւր մասնաւոր նամակը, բայց ըստ որում խնդիրը վերաբերում է ամենքի հետաքրքրութեան այդ արժանի գործին, յոյս ունիմ որ կը ներէ նա ինձ ոչ միայն նամակը տպագրել, այլ և իւր անունն էլ յիշելու։ Դա մեր գրականութեան անխոնջ մշակներից մէկն է՝ բժիշկ Միսակ Աբամեանցը, որին վիճակուած է կենդրոնից հեռու թափառել և սրբոտով մօտ լինել հայ ազգայնութեան դաղափարին։ Գ. Գ.

հացով չէ որ մարդ ապրում է։ Հաղարաւոր մարդիկ կան այսօր, որոնց համար Ներսիսեան դպրոց խօսքը կեղծիք չէ, բիւրաւոր մարդիկ կան, որ Ներսիսեան դպրոցի անունը տալիս՝ կարծես նրանց հոգու և սրտերի մէջ մի անաղարտ ու պայծառ լոյս է ծագում, մի հրաշագեղ դիցուհի ժպտում է նրանց՝ լուսատու, խրախուսիչ, զարթեցուցիչ ժպիտով։ Բայց թէ է զարմանալին,—դրանցից, հաւատի եմ, ոչ ոք չը գիտէ նրա պատմութիւնը։ Ինչ դրանք, հանդուցած եմ, որ չը գիտեն մինչև անգամ նրանք, որոնք այսօր Ներսիսեան դպրոցի անունով պայքար են մտած։ Արդեօք այս տխուր իրողութեան պատճառը վերադրելու չէ նրան, որ ահա Ներսիսեան դպրոցը 15 տարուց աւելի է, որ թիւր ու թեք քննութիւնների, փորձերի, բամբասանքների, մանաւանդ շահախնդիր ձգտումների կուռն է եղած։ Ի տես այն անցքերի, այն փոթորիկների, որ անցել են նրա գլխով, միթէ կարելի է անտարբեր մնալ, որ Ներսիսեան դպրոցի նման մի հաստատութիւն մինչև այժմ իւր պատմութիւնը չունի։ Պ. Աբգար Յովհաննիսեանը մի օր «Փորձ»-ի մէջ երկիւղ էր յայտնել, թէ կարող է Ներսիսեան դպրոցն առանց պատմութեան մնալ։ 8—9 տարի է անցել այդ աղդարարութիւնից և տակաւին մի փորձ եղած չէ, եթէ ոչ գրելու, գոնէ նիւթեր ժողովելու ապագայ պատմութեան համար։ Այս հանգամանքն ինձ միշտ զբաղեցրել է և միշտ մտածել եմ, թէ ինչպէս այս պահանջը կարելի է կատարել։ Ինձ ցաւեցնում էր այն հանգամանքը, որ այս գործին ձեռնարկելու կարող անձինք՝ Ներսիսեան դպրոցի հին աշակերտք, որոնք և ականատես են եղել և վկայ նրա դլխից անցած փոթորիկներին, մանաւանդ 57—61, 64—68 ժամանակաշրջաններում, վայրապարին ցրուած, պառակտուած են, և չկայ մէկը, որ իւր հեղինակական ձայնով ժողովէր նրանց՝ Ներսիսեան դպրոցի պատմութեան նիւթերը հաւաքելու։

«Երբ որ լսեցի, որ ածխի անլաչող առուտուրից լետոյ էլի եկել ես Թիֆլիս և... մտել ես Ներսիսեան դպրոց ուսուցչի պաշտօնով... շատ ուրախացայ, որ դուցէ քո մէջ արթնանայ այդ մոռացած, բայց կենսական կարևորութիւն ունեցող գործերի ձեռնարկութեան անհրաժեշտ լինելու դիտակցութիւնը։

«Աղուց ուզում էի դրել այս մասին, բայց այժմ պատեհ եմ համարում։ Փնռք Աստուծոյ, վերջապէս մի ամսագիր ստացանք և դու այդ ամսագրի սիւներից մինն ես։

«Պակասում էր մինչև այժմ իմ ասած գործը սկսելու համար մի կենդրոն և մի անձն, որ իւր լատկութիւններով կարողանար առաջնորդել այն աշխատութեանը, որ անշուշտ շատերը կը սկսէին կենդրոնի ձայնի վերայ։ Բո արժանաւորութիւններից մինն այն է, որ սուր լիշողութիւն ունիս... արդեօք լաւ բան արին լետագայ դասախարակները, որ այս կարօտութիւնը դանցատութեան տուին։ Արդեօք մեր լիշողութեան պակասութեան վերադրելու չեն այն բազմաթիւ մեղքերը, լանցանքները, որ մենք գործեցինք 25

տարաւ ընթացքում՝ լանուն ազգային լուսաւորութեան, դպրութեան, կըրթութեան և այլն և այլն։

«Իմ կարծիքով, կատարեալ յաջողութիւն կ'ունենար, եթէ պ. Արասխանեանցը լանձն առնէր մի բաժին բանալ իւր «Մուրճ»-ի մէջ այդ գործի համար նիւթեր ժողովելու. հրաւէր կարդար ամենքին, որոնք կարող են նիւթ մատակարարել, ինչ ձև կուզէ լինի, թէ վիշտղութիւն, թէ գրութիւններ, թէ դրագրութիւններ և այլն և այլն, մի խօսքով՝ այն ամենը, որ կարող էր պէտք դալ Ներսիսեան դպրոցի լիակատար պատմութեան համար։

«Դու կենդանի վկայ ես Ներսիսեան դպրոցի պատմութեան՝ սկսած 51-ից մինչև 64—65 թուականները... Եթէ մի այդպէս հրաւէր լինի, կարծում եմ, իսկոյն ձայն կը տան Կուսիկեանը, Թորոսը, Արբակեանցը (մեռած), Յովսէփ Աբովեանցը, Գարեգինը, Տէր-Յարութիւնեանցը, Ռուչարեանցը, Քաջբերունին, բժիշկք՝ Արամեանց, Ղազարեանց, Լեոնը. որ մինն ասեմ. սրանք 58—64 թուերի պատմութեան համար։ 73-ից վեր եկող ժամանակների համար ձայնատուներն աւելի շատ կը լինին, մանաւանդ որ նրանց վիշտղութեանը կարող է նպաստել արդէն կազմակերպած պարբերական մամուլը։ Դու՝ որպէս գործին քաջ տեղեակ՝ հաւաքած նիւթերը կարող ես ընտրել, ստուգել, զտել և վերջ շտեմարան մոցնել։

«Ես այժմ աւելորդ եմ համարում աւելի խօսել. եթէ սկզբունքով ընդունես իմ միտքը և համոզիս, որ այս ձևով կարելի է նպաստակին հասնել և ազատել Ներսիսեան դպրոցի անցեալն առանց պատմութեան մնալու վտանգից—դրիր ինձ, ես կարող եմ իմ միտքն աւելի պարզել»։

Բարեկամիս դիտաւորութիւնը այնքան համակրելի է և մօտ իմ սրտին, որ ես լանձն եմ առնում սիրով ձեռնարկել գրելու այն հաստատութեան պատմութիւնը, որը միակ կարող է բարձրիգլուխ պարծենալ Ռուսաստանումն իւր տուած օգուտներով և արած ծառայութիւններով։

Շատ ուղիղ է դատել պատուական բարեկամս. բաւական չեն Ներսիսեան դպրոցի պատմութեան համար իւր արխիւից հանած նիւթերը, որոնք ըստ մեծի մասին ներքին տեղեկութիւնների և թուանշանների կուտակումներ են անշուշտ և որոնք անհրաժեշտ են գործիս ձեռնարկութեան համար. հարկաւոր են և արտաքին ժամանակակից անձինքների լրացուցիչ փաստերը։ Դժբաղդաբար՝ մի փոքր ուշ է։ Ներսիսեան դպրոցը դրկւում է իւր սկզբնական տարիների կենդանի վկաների կենդանի խօսքերից և բերանացի պատմածներից. 5—10 տարի առաջ դեռ կենդանի էին խորին ծերութեան հասած բաւականաչափ բազմագէտ անձինք, որոնք իւրեանց հետ գերեզման տարան դպրոցին վերաբերեալ շատ մանրամասնութիւններ։ Դեռ էլի ապրում են սակայն սակաւաթիւ պատկառելի ալեորներ, որոնք եթէ ֆիզիկապէս չը դժբարանան, կարող են մեծապէս նպաստած լինել օգտակար ձեռնարկութեանս։ Մեծավաստակ հայր Գաբրիել Պատկանեանի բազմահմուտ ուղեղում ամրարած կան Ներսիսեան դպրոցի նախկին տարիների

շատ փչողութիւններ. Ժրաջան Միքայէլ Պատկանեանցը, հայր Գաբրիէլի հարազատ եղբայրը, երկար տարիներ մաշել է իւր երիտասարդական ոյժը Ներսիսեան դպրոցի սաների կրթութեան գործոյի. խոհական Պետրոս Շանչեանի զգալուն սիրտը աւաղ, այլ ևս չէբաբախում Ներսիսեան դպրոցի քաղցր և դառն ժամանակակից արկածքներով։ Այս լարդելի անձինքներին մօտ եղող երիտասարդների սրբազան պարտքն է՝ անհանդիստ անել նուիրական ծերունիներին, և կը համոզուեն այնպիսիքը, որ բացի Ներսիսեան դպրոցից, շատ ժամանակակից հետաքրքիր և կենսական խնդիրներ կը պարզուին իւրեանց մատուցած ծառայութիւններով։

Եթէ Դուք, պ. խմբագիր, լանձն առնէիք բարեկամիս առաջարկութիւնը լարդելու, մի բաժին բանալիք «Մուրճ»-ի մէջ Ներսիսեան դպրոցի պատմութեան նիւթերի համար, ես լոյս ունիմ, որ ոչ միայն դպրոցիս սաները, որոնց մի քանիսի անունները թուում է աղնիւ բարեկամս, այլ և շատ ուրիշները, թէ աշակերտներից և թէ կողմնակի գիտակ անձինքներից, չէին զլանալ իւրեանց լուման ձգել ազգային գանձարանի մէջ. չէին խնայիլ իւրեանց գիտեցածները և ունեցած գրաւոր ապացոյցները ուղարկել խմբագրութեանդ՝ հարստացնելու Ներսիսեան դպր. պատմութեան նիւթերը։

Այն ժամանակն և ես իմ ունեցած բաւականաչափ պաշարն էլ միացրած նոցա տուածի հետ՝ չէի դանդաղիլ դիմել խոնարհաբար Ներսիսեան դպրոցի լարդոյ Հոգաբարձութեանը և թոյլտուութիւն խնդրել քրքրելու դպրոցի արխիւը։

ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑ

Տեղ տալով պ. Պոօշեանցի այդ ընդարձակ նամակին, շտապում ենք պատասխանել նրան, որ նրա առաջարկութիւնը բոլորովին անընդունելի է։ Մենք չենք կարող «Մուրճ»-ի մէջ տեղ տալ հում նիւթերին, որոնց մէջ կապ գտնելու համար հարկաւոր է մի մասնաժողովի երկարամտեալ, գուցէ և երկարամեալ աշխատութիւնը։ Այդ կը նշանակէր՝ բոլորովին անտես առնել մեր ընթերցողների իրաւացի պահանջները, որ և մեր պահանջներն են՝ տալ միայն մշակուած և ամփոփ լօդուածներ, լօդուածներ, որոնք բացի այդ լատկութիւններից, պէտք է ժամանակակից, ուսանելի և «Մուրճ»-ի դիտաւորութիւններին ծառայելու կարողութեան արժանաւորութիւններն ունենան։ Առաջարկութիւններ՝ դպրոցների արդէն գրուած պատմութիւնները հրատարակել—սորանով երրորդ թէ չորրորդն է, որ ըստանում ենք։ Եթէ հետևենք դոցա առաջարկութիւններին և խորհուրդներին — շուտով «Մուրճ»-ը կը դառնար մի արխիւական հրատարակութիւն, այսինքն այն, ինչ նա երբէք չը պէտք է լինի և ինչի համար այդ ամսագիրը դիտաւորութիւն չունի ծառայելու։ Ներսիսեան դպրոցը ինքը պէտք է հոգայ իւր պատմութեան համար, դէթ այն ձևով գրած, ինչպէս Երևանի թեմա-

կան Դպրանոցինն է և որի մասին ներկայ №-ի դրախօսութեան մէջ խօսում է։ Եթէ այդ հայկական անդրանիկ դպրոցը այժմ պատմութիւն չունի, այդ. կարծում ենք դոնէ, նրանից է, որ վերջին քսան տարիներում, ոչ մի տեսչութիւն և հոգաբարձութիւն չը պէտք է ցանկացած լինի իւր սեպհական պատկերը նկարագրած տեսնել։ Մինթ, օրինակ, Երևանի դպրոցի վարչութիւնը գլուխ կը բերէր վիշեալ գրքի հրատարակութիւնը, եթէ այդ տարին տեսուչ լինէր ոչ թէ պ. Աբիսողոմ Յովհաննիսեանցը, այլ նրա նախորդ Սարգիս (այժմ քահանայ) Բէգնազարեանցը։ Բնական է որ—ոչ։

Մենք, ուրեմն, մեր կողմից սպասում ենք Ներսիսեան դպրոցի պատմութեան հրատարակութեան, երբ այդ դպրոցի վարչութիւնը կազմած կը լինի երեսները պարզ մարդկանցից, բայց մանաւանդ դպրոցի վերայ մանկավարժօրէն նայելու ընդունակութիւն ունեցող մարդկանցից։ Բայց այդ պատմութիւնը, մեր կարծիքով, չը պէտք է այն ծաւալն ունենայ, ինչ պ. Պռօշեանցի նամակը ենթադրել է տալիս։ Մտցնել այդ պատմութեան մէջ ժամանակների բոլոր հոսանքների նկարագիրը, հէնց այն պատճառով, որովհետև գործող անձերը միևնոյն ժամանակ ուսուցիչներ կամ հոգաբարձներ են եղած—կը նշանակէ դպրոցի պատմութիւնը ուրիշ, ոչ-դպրոցական նպատակների ծառայացնել։ Բաւական է, եթէ գիրքը, գրած ժամանակագրական կարգով, բաւականաչափ նիւթեր պարունակի եղրակացութիւններ դուրս բերելու համար, թէ ինչպէս է զարգացել այդ դպրոցը, ինչ ձևի վարչութիւններ է ունեցել նա, ինչ ծրագիրներ է ունեցել դպրոցը, ինչ ուղղութիւնների է ենթարկվել նա, ինչ մանկավարժական սիստեմներ են իշխել դպրոցում, ինչպէս է եղել դպրոցի բարոյական դրութիւնը զանազան շրջաններում, ինչ կարգի աշակերտներ է ունեցած դպրոցը, ինչ փոփոխութիւնների է ենթարկվել ցայժմ առարկաների դասաւանդութիւնը, ինչ մանկավարժական և նիւթական պտուղներ է տվել հոգաբարձական այժմեան ձևը և այլն և այլն. մի խօսքով՝ այդ պատմութիւնը պէտք է իւր նիւթերով դպրոցի սահմանից դուրս չգայ։ Գիրքը պէտք է ուսանելի լինի թէ ուսուցչի ձեռքում և թէ կառավարչի ձեռքում։ Մենք համոզած ենք, որ դպրոցական գրականութեան պակասութիւնից է, որ մեր դպրոցներում ամեն տարի նոյն խաղերն են խաղացվում. եթէ մեր դպրոցների մանրամասն հաշիւները պարբերաբար հրատարակվէին—շատ թիւրիմացութիւնների առաջն առնված կը լինէր. մանկավարժական ժողովները ստիպված չէին լինիլ միշտ միևնոյն խնդիրները ամեն տարի քարոզցանել, այլ, ծանօթ լինելով անցեալ տարիների մանկավարժական ժողովներում եղած խօսակցութիւնների և վճիռների հետ—կը քարոզցանէին նոյն խնդիրները, եթէ մի որ և իցէ նոր բան կ'ունենան ասելու։ Բացի դրանից, մի դպրոց միւս դպրոցից կարող էր օգուտ քաղել։ Իսկ այժմ։ Այժմ ոչ մանկավարժական ժողովներն են օգուտ քաղում իրանց անցեալ տարիների գործունէութիւնից, ոչ էլ հոգաբարձութիւնը կամ հոգաբարձութիւնները։ Դորա

ողբալի հետեանքն այն է, որ դպրոցական առաջադիմութիւն չի նկատւում մեզանում, չը նայած որ Հերբարտի և Ցիլլերի անուններովն ենք երդւում։ Հարկաւոր է ամեն տարւայ գործունէութեան հաշիւները հրատարակել. դոքա են, որ հիմք կը ծառայեն դպրոցների պատմութեան, որը շատ կարեւոր ծառայութիւն կ'անի մեր դպրոցներին։ Ինչ սակայն կ'ուզէ, որ, ներկայ դէպքում, Ներսիսեան դպրոցի բազմամեայ պատմութիւնը հրատարակելու մասին մտածողը պէտք է լինի նոյն այդ դպրոցի վարչութիւնը և ոչ թէ մենք։

Խմբ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՐԴԻՒՆԱՀԱՆԴԷՍ

ԾՐԱԳԻՐ

Բաժին I. Երկրագործական արդիւնքներ։

Խումբ 1 Հացաբոյսեր. ցորեն, գարի, եգիպտացորեն, կորեկ, գօմի, բրինձ, պօլբա, խուփուկ և այլն, ոչ աւելի քան մի պուդ և նոցա հետ հասած հացաբոյսի խուրձեր։ Բրինձը, պօլբան, գօմին և կորեկը ներկայացնելու են թեփահան և անթեփահան։ Դարման և ծղօտ։

Ծանօթ. Հացաբոյսերի նմուշները ըստ կարելիութեան պէտք է լինեն այն ձեւի, ինչպէս նոքա վաճառւում են արդիւնաբերողների կողմից։ Բացի այդ՝ ցանկալի է ունենալ հացաբոյսերի զանազան տեսակների ժողովածուներ, մեծայն ըստ կարելիութեան զատած ուրիշ հատիկների խառնուրդներից։ Ջրաբբի և անջրդի հողերի հացաբոյսերը պէտք է ներկայացնեին առանձին առանձին։

Խումբ 2 Կերակրաբոյսեր։ Մշակւող կամ մշակւելու առաջադրելի կերակրաբոյսերի սերմեր և փոքր խուրձեր. առոյտ (եօնջա), կրունգան, ֆիկ, քրուշնա, գիւլուլ, ուզրեխեյի, շամբալա և այլն։ Սերմեր ներկայացնում են ոչ պակաս քան քառորդ պուդ (10 ֆունտ) քանակութիւնով և նոցա հետ բոյսերի խորամիկներ՝ քաղւած՝ ծաղկած միջոցին։

Խումբ 3 Իւղաբոյսերի չորացրած նմուշներ. քնջիթ, դանադերչակ, կտաւատ, կանեփ, սորեակ և այլն։ Ձիթապտուղ։ Այդ բոյսերի և ձիթապտղի սերմերը—ոչ պակաս քան 10 ֆունտ՝ իրանց վաճառելի ձեւով։

Խումբ 4 Թելաբոյսեր։ Բամբակ. տեղային և օտարերկրեայ տեսակներ, մաքրած և անմաքուր. ցոյցնել ընդ սմին թէ ինչ մեքենայով է մաքրած։ Բամբակաբոյսը արմատներով։ Ցոյցնել սերմերի (հատիկները) ինչ տեսակի լինելը։ Բամբակից և սերմից ներկայացնել ոչ պակաս քան 10 ֆ.